ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-17/4

ք. Սպիտակ 25 օգոստոսի 2017թ.

Սպիտակ համայնքը, ի դեմս Սպիտակ համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ մակունցի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Սպիտակ համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1 885 000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն,

որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
Սպիտակ համայնք	«ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Վանաձոր, Ներսիսյան նրբ. 10/13
Հ/Հ 900242714021	Հ/Հ 11500132095720
ՀՎՀՀ 06801433	ՀՎՀՀ 06950953
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան	Տնօրեն՝ Դ. Մակունց
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
25.08. 2017թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-17/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	71241200	Սպիտակ համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	դրամ	1 885 000	1 885 000	1	ք. Սպիտակ, Շահումյան 7	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 20-րդ օրացուցային օրը ներառյալ:

Չափ բաժին	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը
1	**Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան 1-ից 10-ը բազմաբնակարան շենքերի և Թորոսայն 11, Թորոսյան 12, Թորոսյան 14, Թորոսյան 15, Թորոսյան 17, Թորոսյան 19, Թորոսայն 20, Թորոսյան 21, Թորոսյան 22, Թորոսյան 23 բազմաբնակարան շենքերի ջերմաարդյունավետության արդիականացմանն ուղղված վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ՝** ***Տանիքի ծածկի նորոգում*** Առանց փայտանյութի վնասման տանիքի ողջ կոնստրոիկցիայի կազմատում, ծածկույթի քանդում և հեռացում՝ ապահովելով անվտանգության պահանջները: Տանիքի փայտե ծպեղնահամակարգի նախագծում, դրանում օգտագործելով միայն առկա հենակների ու ծպեղնաոտքերի էական վնասվածքներ չունեցող մասը, իսկ մնացածի և ողջ կավարամածի համար նորի կառուցում: Ողջ փայտանյութի մշակում հակահրդեհային, հակասնկային և հականեխիչ նյութով: Բոլոր օդատար խողովակների դուրս հանում տանիքի ծածկից, ապահովելով գործող նորմերի պահանջները: Առանձին խողովակներից կազմված օդափոխության խուրձքի ջերմամեկուսացում և տանիքից դուրս հանում՝ թիթեղյա պատյանով: Տանիքի նոր ծածկույթի իրականացում պրոֆիլավոր 0.55 մմ հաստության ցինկապատ թիթեղից՝ ապահովելով տեղական նորմերի պահանջները: Ձեղնալուսամուտների խցի շերտավարագուրային ծածկույթով փեղկերի նորոգում և վերատեղադրում, իսկ դրանց բացակայության դեպքում նորի կիրառում: Տանիքի անվտանգության ճաղաշարի ապամոնտաժում, վերականգնում, ներկում և նորից տեղադրում, իսկ դրանց բացակայության դեպքում նորի կիրառում: Տանիքի արտաքին ջրահեռացման բոլոր տարրերի հիմնանորոգում և պակասորդի լրացում ըստ նախապես կազմվող թերությունների ակտի: **Ձեղնահարկի ջերմամեկուսացում** Վերնածածկի վրայի խարամափովածքի ու աղբի հեռացում: Բոլոր չօգտագործված պարագաների հեռացում ձեղնահարկից:

Ձեղնահարկի ծածկասալի ջերմամեկուսացում:Մաքրված վերին մակերևույթի վրա բարակ շաղախային հարթեցնող շերտի իրականացում (եթե անհարթություն է նկատվում)՝ դրա վրա տեղադրելով գոլոշամեկուսիչ շերտ (թաղանթ) և այնուհետև հանքաբամբակի ջերմամեկուսիչ շերտ

(30կգ/մ^3 խտությամբ՝ 15սմ հաստությամբ):Համքաբամբակի ջերմամեկուսիչ շերտի վրա ջրամեկուսիչ պաշտպանող շերտի տեղադրում:Մեկուսիչ շերտերի ծածկում փայտե տակդիր-կմախքի վրա ամրացվող 12մմ հաստության նրբատախնակի վահանակներով՝ շահագործման ընթացքում այն չվնասելու նպատակով:

Մուտքի դռների ջերմամեկուսացում

Շենքի բոլոր մուտքերում դրսի պատից դարչնագույն մետաղապլաստե էկրանների իրականացում: Դրա համար մուտքի արտաքին պատի բաց մասում (առկա մուտքի դռնից մոտ 120 սմ հեռավորությամբ) նախատեսել միաշերտ ապակեպատվածք ունեցող մետաղապլաստե հինգ խցիկանի դռների տեղադրում:Գոյություն ունեցող փայտյա մուտքադռները պետք է վերանորոգվեն, ապակի չունեցող փեղկերը ապակեպատվեն և ներկվեն:

Բակի կողմից մուտքի ներսում արտաքին պատից մոտ 70-75սմ հեռավորությամբ պետք է տեղադրվի 130սմ լայնությամբ հինգ խցիկանի միաշերտ ապակիով մետաղապլաստե դարչնագույն դուռ: Առկա փայտյա դուռը պետք է վերանորոգվի և ներկվի, իսկ բաց փեղկերը՝ ապակեպատվեն: Նկուղի առկա փայտյա դուռը պետք է հիմնանորոգվի և ներկվի:

Հիմնավորում՝ «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետօգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» ծրագրի շրջանակներում Սպիտակի քաղաքապետարանի և «Հաբիթաթ ֆոր հյումենիթի արմենիա» հիմնադրամի միջև կնքված համաձայնագիր:

Նորմատիվային պահանջներ՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596 որոշում «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:

Նախագծման փուլերը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ.N 273-Ն հրամանի համաձայն:

1. **<u>Աշխատանքային նախագիծ</u>**

Նախագծի կազմը՝ Աշխատանքային նախագծի կազմում՝

ա) ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք, սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ

բ) չափագրություններ

գ) ընդհանուր բացատրագիր

դ) շինարարության կազմակերպման նախագիծ

ե) ճարտարապետական մաս,

կոնստրուկտորական մաս, ներքին ինժիներական ցանցային մաս

է)լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ,

ը) ծավալաթերթ և այլն

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախահաշիվը համաձայնեցնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի հետ:

Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, օրացույցային գրաֆիկ:

Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան 17 ջերմաարդյունավետության արդիականացմանն ուղղված վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվա յին փաստաթղթերի մշակում՝

Ձեղնահարկի ջերմամեկուսացումը

Ջերմամեկուսացման խարամի և մանրաքարային աղբի հեռացում և ձեղնահարկի հատակի ծածկասալերի հանգուցակապերի բացում:

Այլևս չօգտագործվող մալուխային սարքերի և խողովակների հեռացում,

Ձեղնահարկի հատակի ծածկասերի ամրությունն ապահովելու նպատակով դրանց հանգույցներից հեռացրեք շինարարական աղբը և մանրաքարային բետոնը: Դրանից հետո ճաքերի մեջ պետք է լցնել բետոնի B15 կարգից ոչ ցածր բարձրակարգ բետոն, և լցոնված ճաքերի մեջ պետք է ներարկել ցեմենտի պոլիմերային սոսինձ՝ դրանց լիակատար ամրությունն ու փոխկապակցումն ապահովելու համար:

Ձեղնահարկի հատակի ջերմամեկուսացում. այս նպատակով տանիքի ծասկասալերի մաքրած մակերեսը պետք է հարթեցվի բարակ (3-5 սմ) բետոնե հարթեցնող շերտով (ըստ անհրաժեշտության), բետոնե սվաղի վրա պետք է տեղադրվի գոլորշապատնեշող շերտ: Այնուհետև այն պետք է ծածկվի հանքաբամբակե ջերմամեկուսիչ շերտով (18 սմ հաստության, λ ≤ 0.04 Վ/մԿ, խտությունը ≥ 20 կգ/մ^3): Մեկուսիչ շերտի հնարավոր վնասվածքը կանխելու նպատակով պետք է նախագծել կամրջակների տեսքով անցուղիներ մտոցից մինչև ձեղնահարկի օդափոխության պատուհանները, որոնք պետք է ծածկվեն 12 մմ հաստությամբ նրբատախտակով (ֆաներա)՝ տեղադրված փայտե տախտակամածի վրա: Նախքան մանրատախտակն ամրացնելը հանքաբամբակը պետք է ծածկվի բարակ գոլորշաթող (դիֆուզիվ) ջրամեկուսիչ թաղանթով:
Ակնկալվող արդյունքը՝ ձեղնահարկի Ս-արժեքը չի գերազանցում 0.2 Վ/մ^{2}Կ (+/- 0.02 Վ/ մ^{2}Կ):

Արտաքին պատերի ջերմամեկուսացումը.

Պատերի արտաքին ջերմամեկուսացման համար պետք է անել հետևյալը.

Հեռացնել ծեփամածիկի կամ բետոնե քանդված մասերի նստվածքը, հատկապես շենքի անկյուններում,
Հեռացնել արտաքին պատերին ամրացված բոլոր տեսակի սարքավորումները, որոնցից են սպասարկման նպատակով մետաղյա աստիճանները, օդորակիչի մասերը, խողովակները, էլեկտրական սարքերը և այլն: Շենքի ճակատային մասի հարթ լինելը հնարավորություն է տալիս ավելի հասարակ եղանակով իրականացնել ջերմամեկուսացումը: Զարդաքանդակները կարելի է կրկնօրինակել հատուկ ջերմամեկուսիչ պրոֆիլներով:
Վերանորոգել բետոնե արտաքին շերտը (ծածկույթը) ցեմենտի հիմք ունեցող շերտով,
Հեռացնել շենքի շուրջն առկա մայթի հատվածը (շենքի պարագծով փռված ասֆալտի շերտը), շենքի արտաքին պատին հարող հատվածում փորել հողը մոտ 1 մ խորությամբ՝ կոշտ ջրամեկուսիչ շերտ տեղադրելու համար,
Գետնի մակերեսից մոտ 0.8 մ խորության վրա և գետնի մակերեսից մոտ +1.0 մ բարձր գետնախարիսխի մեկուսացում փքված պոլիստիրենային բլոկերով (ՓՊՍ) և մեկ հավելյալ պաշտպանիչ ջրահեռացման շերտով (թաղանթով)՝ 10 սմ հաստությամբ, λ ≤ 0.04 Վ/մԿ, խտությունը՝ 30 կգ/մ^3,
Նախքան ջերմամեկուսացման աշխատանքները կատարելը պետք է ապահովել, որ պատի մակերեսը չոր և մաքուր լինի:
Հանքաբամբակի սալի տեղադրում (MW-14 սմ հաստությամբ, λ ≤ 0.04 Վ/մԿ, խտությունը՝ 80 կգ/մ^3) ցեմենտի հիմքով պատրաստված սոսնձանյութով՝ օգտագործելով քարթեզր ծեփաբահիկ: Հանքաբամբակի շերտերի եզրերից դուրս եկող կպչուն շերտի ավելցուկները պետք է քերվեն և հեռացվեն՝ ջերմային կամուրջներից խուսափելու նպատակով:
<u>Հանքաբամբակի շերտերի տեղադրումը պատերին:</u> Շերտերի միջև եղած 1.6մմ-ից ավել բացվածքը կամ դատարկ տարածությունը պետք է լցվի նույն ջերմամեկուսիչով կամ նմանատիպ այլ նյութով (էպոքսիդով): Շերտերը պետք է պատերին ամրացվեն համապատասխան պլաստմասե պտուտակներով: Մեխանիկական ամրացուցիչների պտուտակները օգտագործվում են որպես ժամանակավոր ամրացնող միջոցներ՝ մինչև կապակցող նյութի չորանալը:
Անկյունային հատվածներում, որտեղ իրար են հանդիպում շերտերը և բացվածքի պարագծերը, միացման հանգույցները պետք է ծածկվեն սիլիկոնե հիմքով խցիչներով: Պատերի ներքին և արտաքին անկյուններում ջերմամեկուսացնող շերտերը պետք է հավաքվեն և միացվեն ամրացման ծիծեռնակատուտ սխեմայով: Դռների և պատուհանների բացվածքներում ջերմամեկուսացնող շերտերը պետք է լինեն ամբողջական՝ կտրված համապատասխան չափով: Շերտերը պատուհանների և դռների անկյունների հետ մի գծի վրա տեղադրելն անթույլատրելի է:
Հանքաբամբակի շերտերի վրա պետք է օգտագործել ցեմենտ չպարունակող ամրացնող ծածկույթ, որը պատիճապատում է ամրացնող ապակե մանրաթելային ցանցը՝ դիմակայելու մեխանիկական և ջերմային ազդեցություններին: Ջերմամեկուսացնող տախտակների ծածկույթը պետք է հնարավորություն տա, որ խոնավությունը դուրս գա դեպի արտաքին միջավայր: Նախընտրելի է հանքային բաղադրությամբ ծածկող շերտը:
Մակերեսի շերտածածկում դեկորատիվ ծեփով,
Քսել շենքի ճակատամասի համար նախատեսված ուլտրամանուշակագույն ճառագայթակայուն լատեքսի հիմքով ներկ երկու շերտով,
Ջերմամեկուսացումն ավարտելուց հետո պետք է վերատեղադրել խողովակները և այլ սարքերը՝ առանց ճակատային մասում ջերմային կամուրջներ առաջացնելու:

Պետք է օգտագործել հետևյալ ամրացումներն ու պրոֆիլները.

Ամրացումները. պատուհանների անկյուններին և դռների ճեղքերին ամրացումները պետք է անել անկյունագծով: Դրանք պետք է թաղվեն առաջին շերտի ծածկույթի մեջ՝ նախքան մակերեսային ամրացման տեղադրումը և պետք է այնպես ամրացվեն, որ շերտի եզրը անկյունին ուղղակիորեն ամրացվի մոտ 45° անկյան տակ: Ամրացման շերտերի չափերը մոտ 200 x 300 մմ են:
Եզրի պաշտպանում/անկյունի թեքություն.

Անկյունների և եզրերի համար կիրառվում են լամինացված ապակե մանրաթելի ցանցով պրոֆիլներ և թելքավոր հյուսվածքաշերտեր: Մակերեսային ամրացման հետ կապը պետք է լինի առնվազն 10 սմ համընկնումով:
Բազային պրոֆիլ. Ս-աձև ալյումինե պրոֆիլ:
Պատուհանների միակցման պրոֆիլներ. կիրառվում են լամինացված ապակե մանրաթելի ցանցով կամ համապատասխան ճկուն խցանող նյութով (օր.՝ compriband®) պլաստիկ պրոֆիլներ պատուհանների/դռների հետ միացնելու համար՝ապահովելու երկարաժամկետ անջրանցիկ կապակցում ջերմամեկուսիչի և պատուհանների/դռների պրոֆիլների միջև:
Ընդարձակման միակցող պրոֆիլներ. սրանց համար կիրառվում են լամինացված ապակե մանրաթելի ցանցով պլաստիկ պրոֆիլներ:
Պատշգամբները պետք է ջերմամեկուսացվեն կամ սալերն ամբողջապես պարուրելով ջերմամեկուսիչով կամ հատելով առկա կառույցը և ջերմամեկուսացված ճակատամասին ամրացնելով նոր, թեթև քաշով շինվածք:
Բոլոր պատուհանների համար պետք է տեղադրվեն նոր պատուհանագոգեր: Ակնկալվող արդյունքը. արտաքին պատերի Ս-արժեքը չպետք է գերազանցի 0.24 Վ/մ²Կ (+/- 0.02 Վ/մ²Կ):

Մուտքի դռների ջերմակայունության բարելավումը.

Բոլոր մուտքերի ներսի մասում տեղադրեք ջերմամեկուսիչ մետաղապլաստե միջնորմներ (դռներ): Այս նպատակի համար շենքերի մուտքում, աստիճաններից առաջ, մուտքի դռնից մոտ 120 սմ հեռավորությամբ կարելի է տեղադրել չորսխցանի, ապակի ունեցող մետաղապլաստե դռներ: Առկա մետաղյա/փայտե դռները պետք է ապամոնտաժվեն և նրանց փոխարեն տեղադրվեն մետաղյա շրջանակով նոր փայտյա դռներ՝ փոքր փեղկերով՝ ցերեկային լույսը ներս թողնելու նպատակով:

Միաժամանակ, մուտքի դռների վերևի բետոնե մասը պետք է հեռացվի և մետաղյա շրջանակով ցինկապատ ծածկ
պետք է տեղադրվի:

Աստիճանավանդակի պատուհանները.

Աստիճանավանդակի հին փայտյա պատուհանների փոխարինում նոր, չորսխցանի կրկնակի ապակի ունեցող մետաղապլաստե պատուհաններով: Բարեկարգման աշխատանքներում պետք է ներառել պատուհանագոգերի տեղադրումը և պետք է տրամադրվեն նաև տեղադրման սխեմաները:

Հիմնավորում՝ «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետօգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» ծրագրի շրջանակներում Սպիտակի քաղաքապետարանի և «Հաբիթաթ ֆոր հյումենիթի արմենիա» հիմնադրամի միջև կնքված համաձայնագիր:

Նորմատիվային պահանջներ՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596 որոշում «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:

Նախագծման փուլերը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ.N 273-Ն հրամանի համաձայն:

1. **Աշխատանքային նախագիծ**

Նախագծի կազմը՝ Աշխատանքային նախագծի կազմում՝

ա) ելակետային տվյալներ՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք, սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախահաշիվը համաձայնեցնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի հետ:
Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, օրացույցային գրաֆիկ:

	Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճի վերանորոգման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի մշակում՝ Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճի վերանորոգում: Նախահաշիվը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն: Նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախահաշիվը համաձայնեցնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի հետ: Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, օրացույցային գրաֆիկ: **Սպիտակ համայնքի Տաշիր, ՈՒզբեկական, Էստոնական և Այգեստան թաղամասերի լուսավորության համակարգերի անցկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝** Սպիտակ համայնքի Տաշիր (2000մ), Էստոնական (750մ), ՈՒզբեկական (760մ), Այգեստան (780մ) թաղամասերի նոր լուսավորության համակարգի կառուցում: Նախահաշիվը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախահաշիվը համաձայնեցնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի հետ: Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, օրացույցային գրաֆիկ: Նախագծանախահաշիվը ներկայացնել փորձաքննության: **Սպիտակ համայնքի Կենտրոն 1 թաղամասի խաղահրապարակի բարեկարգման, ցանկապատման, լուսավորության անցկացման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝** Սպիտակ համայնքի Կենտրոն 1 թաղամասի խաղահրապարակի բարեկարգմում, ցանկապատում, լուսավորության անցկացմում և ջրահեռացման համակարգի կառուցում: Նախահաշիվը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախահաշիվը համաձայնեցնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի հետ: Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, օրացույցային գրաֆիկ: **Սպիտակ համայնքի փողոցների և հետիոտնային անցումների նշագծման նախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքներ՝** Նախահաշիվը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախահաշիվը համաձայնեցնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի հետ: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, օրացույցային գրաֆիկ:

Այլ պայմաններ	
Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 3 օրինակից թղթային և էլեկտրոնային տարբերակով	
Աշխատանքների կատարման	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20-րդ օրացուցային օրը ներառյալ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սպիտակ համայնք	«ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Վանաձոր, Ներսիսյան նրբ. 10/13
Հ/Հ 900242714021	Հ/Հ 11500132095720
ՀՎՀՀ 06801433	ՀՎՀՀ 06950953
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան	Տնօրեն՝ Դ. Մակունց
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
25.08.2017թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-17/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200	Սպիտակ համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	1 885 000	1 885 000	1 885 000	1 885 000	1 885 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք

ք. Սպիտակ, Շահումյան 7

Հ/Հ 900242714021

ՀՎՀՀ 06801433

ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.

Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ

ք. Վանաձոր, Ներսիսյան նրբ. 10/13

Հ/Հ 11500132095720

ՀՎՀՀ 06950953

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Մակունց

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
25.08.2017թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-17/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
«ԲԵՍԹ ՔԱԴ» ՍՊԸ	Սպիտակ համայնք
ք. Վանաձոր, Ներսիսյան նրբ. 10/13	ք. Սպիտակ, Շահումյան 7
Հ/Հ 11500132095720	Հ/Հ 900242714021
ՀՎՀՀ 06950953	ՀՎՀՀ 06801433

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները ՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՆՄՈՒՇ

Հավելված 3.1
25.08. 2017թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-17/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը   Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. ______________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը   պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն